ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի 9բ
հեռ:՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67 հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ. meo@ypc.am

ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի եզրակացությունը

Ընդդեմ մի շարք լրատվամիջոցների՝ Հայող ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի դիմումի վերաբերյալ

Քննարկելով ընդդեմ մի շարք լրատվամիջոցների՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի 2011 թվականի մայիսի 16-ի դիմումը՝ ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը եզրակացնում է.

1. Մի քանի անգամ դիտելով եւ քննարկելով 2008 թվականի սեպտեմբերի 6-ի Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպման ժամանակ Ծիծեռնակաբերդ հուշահամալիրի գիշերային լուսավորության մասին **«Երկիր Մեդիա»** ՀԸ-ն տեսանյութը՝ Դիտորդ մարմնի անդամները եկան այն եզրահանգման, որ նկարահանման ժամանակ «Երկիր Մեդիա»-ի լրագրողները կարող էին տպավորություն ստանալ, որ հուշահամալիրի գիշերային լուսավորությունը ֆուտբոլային հանդիպման ժամանակ տարբերվել է այլ օրերի լուսավորությունից:

Բացի այդ, ռեպորտաժից ակնհայտ է դառնում, որ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության մեկնաբանություններն անձնավորված չեն, դրանցում որեւէ կերպ չի հիշատակվում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի անունը, այլ ուղղակի ներկայացվում են փաստեր: « »

Դիտորդ մարմնի անդամները դիմել են «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության տնօրինությանը եւ տեղեկացել, որ ՀԸ-ն ներկայացուցիչները, ի պատասխան պարոն Դեմոյանի 2008թ. հոկտեմբերի 8-ի նամակի, վերջինիս առաջարկել են հանդես գ«Երկիր Մեդիա»-ի եթերում, ներկայացնել իր դժգոհությունները եւ արտահայտել իր կարծիքը: Սակայն, ըստ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության ներկայացուցիչների, պարոն Դեմոյանը չի արձագանքել այս առաջարկին: Այս առումով հեռուստաընկերությունը գործել է Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնի շրջանակներում՝ մասնավորապես պահպանելով դրա 6.2. կետի պահանջները, համաձայն որի՝ լրատվամիջոցը պարտավոր է «պատրաստակամ լինել հանդիպելու եւ պատասխանի հնարավորություն ընձեռելու այն անձանց, ում հասցեին մեղադրանքներ են եղել հրապարակումներում»:

Ինչ վերաբերում է 2008 թվականի սեպտեմբերի 26-ին **«Երկիր» թերթում** հրապարակված եւ 2008 թվականի հոկտեմբերի 1-ին **«Երկիր Մեդիա»-ի** եթերում հնչած Արմեն Այվազյանի հարցազրույցներին, վերոնշյալ ԶԼՄ-ները վեճի պատշաճ կողմեր չեն համարվում, քանի որ ընդամենը ներկայացրել են պարոն Այվազյանի պնդումները եւ կարծիքները եւ որեւէ իրավական հիմք չունեին միջամտելու այդ կարծիքներին եւ պնդումներին: Բացի այդ, ըստ վերոնշյալ լրատվամիջոցների պնդումների, նրանք պատրաստակամություն էին հայտնել հրապարակել Հ. Դեմոյանի տեսակետը նույնպես: Այդպիսով, լրատվամիջոցները գործել են Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնի շրջանակներում, որի 6.1. հոդվածը կոչ է անում լրատվամիջոցներին՝ «աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից»:

Այնուամենայնիվ, «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության հեռարձակած՝ Արմեն Այվազյանի հետ հարցազրույցում Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպման մասին հեռուստաընկերության տեսանյութի օգտագործումը անտեղի սրում է Արմեն Այվազյանի քննադատությունները Հայկ Դեմոյանի հասցեին:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Դիտորդ մարմինը եզրակացնում է, որ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությանը եւ «Երկիր» թերթին վերաբերող բողոքի մասով, Ինքնակարգավորման նախաձեռնության միացած լրատվամիջոցների վարքականոնը չի խախտվել:

Միեւնույն ժամանակ, Դիտորդ մարմինը գտնում է, որ ցանկալի կլիներ, որ «Երկիր Մեդիան» խուսափեր Արմեն Այվազյանի հարցազրույցում ֆուտբոլային հանդիպման մասին տեսանյութի կադրերի օգտագործումից՝ կողմնապահության որեւէ կասկած բացառելու համար:

2. Բողոքի երկրորդ, երրորդ եւ չորրորդ մասերը վերաբերում են համապատասխանաբար՝ բողոքում նշված լրատվամիջոցներում Գ. Յազըճեանի կողմից գիտական բանավեճի կանոնները խախտելուն, վերջինիս օբյեկտիվ լինելուն (2011 թվականի մարտի 26-ին **«Հետք» օնլայն պարբերականում** եւ **«Ազգ» օրաթերթի** 2011 թվականի ապրիլի 9-ի «Գիտական բարոյականության եւ գիտության մեջ պատեհապաշտության մասին» հոդվածում), ինչպես նաեւ Արմեն Այվազյանի կողմից Հայկ Դեմոյանի մտքերի եւ թեզերի օգտագործմանը (“Республика Турция - первое в истории фашисткое государство”, 2011 մարտի 18-ի **«Սոբեսեդնիկ Արմենիի» շաբաթաթերթում** հրապարակված հոդվածում): Դիտորդ մարմինը գտնում է, որ բոլոր այս կետերով՝ նշված լրատվամիջոցները չեն հանդիսանում պատշաճ կողմ, լրատվամիջոցների էթիկայի տեսանկյունից հրապարակումներում արտահայտված կարծիքներում Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնի խախտում չկա, իսկ գիտական բանավեճի էթիկայի առումով՝ Դիտորդ մարմինը իրավասու չէ եզրակացություն տալ: Ցանկալի կլիներ, որ էթիկայի այդ կարգի վեճերը կարողանային լուծում ստանալ

համապատասխան ակադեմիական կառույցի կողմից:

3. Պարոն Դեմոյանը բողոք է ներկայացրել նաեւ **«Առավոտ» օրաթերթում** 2011 թվականի ապրիլի 1-ին լույս տեսած՝ Վլադիմիր Հարությունյանի «Պղծում, պղծում մինչեւ վերջ» հոդվածին, համարելով այն վարկաբեկիչ, վիրավորական եւ փաստերով չհիմնավորված: Դիմումատուի բողոքի առարկա հանդիսացող արտահայտությունները գնահատող դատողություններ են եւ չեն հանդիսանում Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնի խախտում: Այս առումով, ԴՄ-ը որոշ չափով ղեկավարվում է նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայով, որը «Լինգենսն ընդդեմ Ավստրիայի» գործի վճռի 46-րդ կետում նշել է, որ «Դատարանի կարծիքով անհրաժեշտ է տարբերակում դնել փաստերի եւ գնահատող դատողությունների միջեւ: Եթե փաստերի հավաստիությունը կարելի է ապացուցել, ապա գնահատող դատողությունների ճշմարտացիությունն անապացուցելի է»:

4. Բողոքի վերջին մասում պարոն Դեմոյանը դիմում է Էթիկայի դիտորդ մարմնին՝ հետաքննելու եւ եզրակացություն տալու www.panarmenian.am, www.arka.am , www.economist.com օնլայն պարբերականների հրապարակումների վերաբերյալ, որոնք ներկայացնում են Հայկ Դեմոյանի տեսակետները: Հաշվի առնելով այն փաստը, որ նշված եւ ոչ մի լրատվամիջոց չի ստորագրել Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնը եւ չի միացել ինքնակարգավորման նախաձեռնությանը, Դիտորդ մարմինն իրավասու չէ քննելու եւ եզրակացություն տալու այդ հրապարակումների վերաբերյալ:

Ընդունվել է Զանգվածային լրատվության էթիկայի դիտորդ մարմնի 2011թ. դեկտեմբերի 25-ի նիստին:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 48-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնով, որն ընդունվել է ինքնակարգավորման մարմնի 2007 թվականի մարտի 10-ի ժողովին: